



Դեկտեմբեր

Նախաբան

“Բնությունը կատակներ չի ճանաչում,
Նա միշտ արդարացի է, միշտ լուրջ է,
Միշտ խիստ է, միշտ ճշմարտացի,
Միայն նույն մոլորությունները
Միշտ մարդկանցից են բխում”

Գյոթե

Ներկայումս մարդկության առջև ծառայած ամենաբարդ և ամենակարևոր համաերկրային հիմնախնդիրը բնության և հասարակության դինամիկ հավասարակշռության պահպանությունն է: Հարցն այսպես է դրված. կամ մարդը կկարողանա պահպանել այդ դինամիկ հավասարակշռությունը, կամ նրա մեղքով կվերանան բնական համալիրները և հետևաբար նաև մարդը: Վերջին հիսնամյակում բնությունը ենթարկվում է անողոք հարձակման և այն ահռելի չափերի է հասել նաև Հայաստանում:

Երկիր մոլորակում յուրաքանչյուր ոք և յուրաքանչյուր երկրի իշխանություն պարտավոր է հնարավորինս կանխել ու մեղմել շրջակա միջավայրի աղտոտվածությունը և նրանից բխող խնդիրները: Այս կոնտեքստում կարևոր է հասարակության լայն շերտերում իրազեկվածության բարձրացումը:

Այդ գործունեությանն է ուղղված Հրազդանի Օրհուս կենտրոնի աշխատանքը, որը իր տարիների գործունեության արդյունքում աշխատելով հասարակության հետ՝ հաջողություններ ու ձեռքբերումներ է գրանցել:

Հրագրանի Օրհուս կենտրոնի գործունեության ամփոփ բնութագիրը սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին

Հրագրանի Օրհուս կենտրոնը իր քառամսյա գործունեությունը ծավալել է՝ հիմնվելով տեխնիկական առաջադրանքի վրա:

- Կենտրոնը մշտապես կապի մեջ է եղել քաղաքապետարանի հետ, նյութեր է տրամադրել կապված թունաքիմիկատների պահեստարանի հնարավոր կառուցման հետ, որին քաղաքապետարանը չէր տիրապետում:
 - Կազմակերպել է հանդիպումներ քաղաքապետի օգնականի, բնապահպանության բաժնի մասնագետների հետ, քննարկել խնդիրները / վերջին երկու ամիսներին ամենահրատապ և սուր խնդիրը թունաքիմիկատների պահեստարանի կառուցման հարցն է /:
 - Կազմակերպել հանդիպում հասարակության հետ, որտեղ ՏԻՄ ներկայացուցիչները պատասխանել են հանրության հուզող հարցերին՝ կապված շրջակա միջավայրի պահպանության հարցերի հետ, որոնք անմիջականորեն հարում են առողջական խնդիրներին և սերունդներին թողած ժառանգությանը:
 - Վերհանել է շրջակա միջավայրին առնչվող տարածքային հիմնական խնդիրները՝ վերլուծելով խնդրի նկարագրությունը ու կարևորությունը. դրանք են.
- ✓ Օդային ավազանի աղտոտումը փոշով
 - ✓ Հրագրան գետի աղտոտումը Հրագրան քաղաքի կեղտաջրերով, որոնք խառնվում են գետի ջրերին առանց որևէ մաքրման
 - ✓ Տարածքի ոչ բավարար սանիտարական մաքրումը
 - ✓ Շրջակա տարածքների անտառների կրճատումը, հողերի բերրի շերտի արտահանումը
 - ✓ Սելավների, ջրհեղեղների և սողանքների առաջացման ռիսկերի բարձրացումը
 - ✓ Էկոլոգիական իրավիճակի հավանական վատացումը՝ կապված երկաթի հանքավայրի հնարավոր շահագործման հետ
- Կենտրոնի համակարգողը կազմել է առաջարկություններ՝ Հրագրան քաղաքի հնգամյա զարգացման ծրագրի բնապահպանական մասում ներառելու համար և տվել լուծումներ

ՀՀ Կոտայքի մարզի Հրազդան համայնքի 2017-2021 թթ. զարգացման հնգամյա ծրագիրը մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

- Կենտրոնում կազմակերպվել է Հրազդանի հնգամյա զարգացման ծրագրի հետ կապված առաջարկությունների քննարկում՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ
- Կենտրոնի համակարգողը մասնակցել է համայնքի նորընտիր ավագանու առաջին նիստին և ներկայացրել առաջարկությունները՝ հնգամյա զարգացման ծրագրի մեջ ներառելու համար

Առաջարկություններից որոշ կետեր ընդունվել են և ընդգրկվել ծրագրի մեջ:

- Հաշվետվությունները տեղադրվել են Aarhus.am կայքում

Նշված բոլոր կետերի վերաբերյալ հանգամանորեն ներկայացվել է նախորդ երեք ամիսների հաշվետվություններում:

Կանխատեսումներ քաղաքի էկոլոգիական իրավիճակի վերաբերյալ

Կենտրոնի կողմից ներկայացված առաջարկություններն ու լուծման ուղիները իրագործելու և բնապահպանական ոլորտում լայնածավալ այլ աշխատանքներ տանելու համար կողմնակի ֆինանսական աղբյուրներ հայթայթելու, միջազգային տարատեսակ ծրագրերի մեջ ընդգրկվելու պարագայում համայնքը կնպաստի քաղաքի էկոլոգիական բնութագրի էական լավացմանը:

Հակառակ պարագայում, քաղաքի էկոլոգիական կոնստեքստում քիչ բան կարող է փոխվել, որի հետևանքով քաղաքում էկոլոգիական անբավարար վիճակը կարող է հետագայում հասնել վատագույնին: Այն է՝ “Ցեմենտի” գործարանի գործունեության վերականգնումը՝ առավելագույն հզորությամբ, որի ընթացքում անտեսվում են բոլոր բնապահպանական միջոցառումները, “Հրազդան ՋԷԿ”-ի և “Հրազդան-5”-ի արտանետումները, որոնք էապես ազդում են ինչպես օդային ավագանի, այնպես էլ Հրազդան գետի ջրի որակի վրա, քանի որ արտադրական կեղտաջրերը առանց որևէ մաքրման շատ դեպքերում լցվում են Հրազդան գետը:

Անհետևողականության և միջոցառումների բացակայության պարագայում Հրազդան գետի ավազանում հանքավայրերի ակտիվ շահագործումը, ինչպես արդեն նշել ենք նախորդ հաշվետվություններում, կհանգեցնի բնապահպանական և առողջապահական աղետի:

Եվ այդ պարագայում Հրազդանը կարող է դառնալ էկոլոգիական աղետի գոտի, որի բացասական ազդեցությունը կտարածվի ոչ միայն Հրազդանի, այլ նաև քաղաքին շատ մոտ գտնվող Ծաղկաձոր քաղաքի վրա, որը տուրիստական գոտի է և որտեղ զարգանում է հատկապես մարզաառողջարանային տուրիզմը:

Պահպանել բնությունը նշանակում է պաշտպանել հայր ենիքը:

Մ.Մ. Պրիշվին

Օգտագործած աղբյուրներ՝ սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների հաշվետվությունների համար

1. Լ.Ս. Մելքումյան “Բնապահպանության հիմունքներ” 2010 թ.
2. Հայկական սովետական հանրագիտարան
3. Գեո Հրազդան 2009 թ.
4. «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ
5. “Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի” նախագիծ
6. ՀՀ սահմանադրություն
7. Հրազդանի քաղաքապետարան
8. Կոտայքի մարզպետարան

**Անահիտ Մնացականյան
Հրազդանի Օրհուս կենտրոն**